ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Վայրը՝ **ք.Երևան**

26 հունվարի 2024թ.
ժամը **14:00**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«29» նոյեմբերի 2023թ.** թիվ **871** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Արարատի մարզի Ջրահովիտ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման»** աշխատանքների ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթցակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Էմանուել Իվանյան՝ Հանձնաժողովի նիստի նախագահ
Սերգեյ Հարությունյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Գայանե Քարիմյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Մետաքսյա Եղիազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1.1 «Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Ալյանս» ՍՊԸ ՀԳ-ի կողմից սահմանված ժամկետում

- շտկվել է հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատված համատեղ գործունեության պայմանագիրը,
- ներկայացվել է տեղակապում իրականացնող նոր կազմակերպություն՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ-ն, և վերջինիս՝ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝ պետական գրանցման վկայական, լիցենզիա, արտոնագրեր, անձը հաստատող փաստաթղթեր:
- ներկայացվել են նախորդող հինգ տարիների ընթացքում կատարված պայմանագրեր (ներառյալ՝ ավարտական ակտեր, տեղեկանքներ, excel ֆայլեր): Գնահատման արդյունքում պարզվեց, որ պայմանագրերի հետ ներկայացված չեն բոլոր պայմանագրի մաս կազմող ծավալաթերթ-նախահաշիվները, ինչպես նաև դրանց պատշաճ կատարման վերաբերյալ՝

հրավերով պահանջված ավարտական ակտերը: Մասնակցի կողմից կնկին ներկայացվել են ԱՀ Քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքներ, որոնք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ի կողմից բավարար գնահատված պայմանագրերի հանրագումարը չի գերազանցում երկու միլիարդ ՀՀ դրամը, ինչից ելնելով, պայմանագրի շնորհման դեպքում պայմանագրի որակավորման ապահովման չափը կկազմի գնման առարկայի կողմորոշիչ գնի երեսուն տոկոսը:

1.2 **Ի պատասխան հանձնաժողովի հարցմանը կապված ՀՀ-ում գրանցման ճանաչում կատարած լինելու վերաբերյալ՝ «Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ն** գրությամբ հայտնել է, որ « **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ն տեղեկացված են ՀՀ-ում Արցախից տեղափոխված կազմակերպությունների վերակազմավորման պետական հաշվառման գործընթացին, ընկերությունները ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը ՀՀ ՊԵԿ, որից հետո պետք է դիմեն ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, պետական գրանցում ստանալու համար: Անհրաժեշտ հաստատումների ավարտը մինչև 31.01.2024թ»:**

1.3 **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ի** կողմից ներկայացված հայտը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.4 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

1.5 Բավարար գնահատված Մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ է ներկայացվել **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ի** կողմից:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Ընտրված մասնակից հայտարարել (ճանաչել) նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ -ին,** պայմանագրի գինը՝ **1,770,000,000 (Մեկ միլիարդ յոթ հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ:**

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի

նախագահ՝

Էմանուել Իվանյան _____

անդամներ՝

Սերգեյ Հարությունյան _____

Գայանե Քարիմյան _____

Մետաքսյա Եղիազարյան _____

Նարեկ Աղաջանյան

քարտուղար՝

Լիլիթ Սեդրակյան